# ԳՈՐԾ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒ

## ԱԶԳԱՅԻՆ

### ԱՄՍԱԳԻՐ

*ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ—ԱՊՐԵԼ*

№ 1

1883

Խմբագրութիւն „Գործ ամսագրի
ՇՈՒՇԻ

Տպարան Մ. Վարդանեան եւ ընկ.
ԹԻՖԼԻՍ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես

I Խմբագրութեան կողմից ազդ . . . . . 1

II Գիւղական տնային արդիւնագործութիւն . . . . 3

III Յայտարարութիւններ։

Ծանօթ. — «Գործի» գրաքննութիւնը կառավարութեան հրամանաւ տեղափոխուած է Թիֆլիս, ուստի մենք Թիֆլիսում ենք հրատարակում։

## ԽՄԲԱԳՐՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

# ԱՋԳ

Յոյս ունենք՝ որ մեր բաժանորդները չեն դատապարտիլ մեզ «Գործի» այս բարակ համարը տեսնելով։ Մենք շտապով հրատարակումենք այս մի թերթը «Գործի» շարունակութեան իրաւունքը օրէնքի առաջ պահպանելու համար։ Այժմ հնար չկայ կատարեալ համար հրատարակելու—։Նիւթեր շատ են եւ մենք պատրաստութիւններ ենք տեսնում կանոնաւոր հրատարակութեան համար, որը շատ ուշ չէ տեւիլ։

Ուրեմն կրկնում ենք, որ այս համարը չէ կարող ամենեւին ծառայել ինչպէս նմուշ «Գործին» այլ միայն տպագրվում է հրատարակութեան իրաւունքը պահպանելու համար։

Այժմ երբ մենք վերականգնում և նորոգում ենք «Գործի» հրատարակութիւնը, յուսով ենք որ հասարակութիւնը մեզ միջոց կտայ շարունակել և չի մեռցնի մի հասարակական օրգան, որին խոսքով շատ համակրութիւն ցոյց տուաւ։ «Գործի»բաժանորդագրութիւնը բացուած է։ Հասցէն —Шуша. Редакція Журнала «Горцъ». Թիֆլիսում կարելի է ստորագրուել Շահվերդեանի Լրագրական գործակալութեան մէջ։

Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆ

# ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

## ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԻՍՏԻԿԱՅԻ ՄԻՍՏԵՐԻ

## ԳԻՒՂԱԿԱՆ ՏՆԱՑԻՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ։

## (КУСТАРНЫЙ ПРОМЫСЕЛЪ)

Մինչեւ այժմ կարելի է լսել դանգատներ, թէ մեզանում չէ զարգացած արդիւնագործութիւնը, թէ հարկաւոր է մեզանումէլ զարգացնել եւրոպական արդիւնագործութեան նմանը. շատ անգամ կարելի է լսել ոգեւորուած տեսած եւ լսած եւրոպական գործարանների նկարագրութիւնները։ Վերջապէս առաջարկութիւններ՝ հում բերքեր Հայաստանից Կոնստանդնոպոլիս տանելու եւ այնտեղ մշակելու եւ այդպիսով ժողովրդական տնտեսական դրութիւնը բարձրացնել։ Բայց բարեբաղդաբար բոլոր այս տեսակ մտածմունքները մնում են անիրագործուած. ասում ենք բարեբաղդաբար, որովհետեւ շնչտով ստիպուած կը լինէին բոլոր վնասակար հետեւանքներն զգալ ի վնաս իրանց անձանց եւ գրպանի։ Արդիւնագործական արդիւնահանութիւնը լինում է շատ զանազան տեսակ՝ որ կախուած է կապիտալի եւ աշխատանքի զանազան տեսակ միաւորուելուց եւ աշխատանքի ազատ լինելուց։ Բայց այս զանազան տեսակները (ձեւերը) կարելի է երկու դասակարգի բաժանել՝ ա) մեծ ա ք ա ն ա կ եւ բ) փ ո ք ր ա ք ա ն ա կ արդիւնահանութիւն։ Առաջին ձեւին պատկանում են գործարաններն եւ մանուֆակտուրան. իսկ երկրորդին արհեստներն եւ տնային արդիւնագործութիւնը։ Այս բոլոր տեսակներից իւրաքանչիւրը յարմար է այս կամ այն տեղին եւ կախուած է հասարակական կեանքի զարգացումից. այս կամ այն տնտեսական եւ քաղաքական զարգացումից։ Ինչպէս որ զանազան գիւղատնտեսութեան ձեւերը յարմարութիւն ունին միայն մի յայտնի քաղաքական եւ տնտեսական զարգացման աստիճանում, նոյնպէս եւ արդիւնագործութեան զանազան ձեւերը կախումն ունին քաղաքային եւ տնտեսական զարգացումից։ «Կարծելով թէ բանը ձեւի մէջն է, ասում է Կօրսակ, որն որ կա-

բերի է ցանկութեան համեմատ փոխել, շատերը առանց երկմտելու գալիս են այն եզրակացութեանը, թէ բաւական է արդիւնագործութիւնը մի ինչ եւ իցէ սահմանի մէջ դնել, կազմել նորա համար մի նախագիծ եւ բանը իւր կարգով կը գնայ»: *) Նոյն տեսակ անմիտ բան կը լինէր թէ Անգղիայի տիպար ագարակ եւ թէ Անգղիայի օրինակելի գործարանը բոլոր իրանց կարգ ու կանոններով հիմնուէր Դաղստանում, կամ Հայաստանում: Պատմական եւ ժողովրդական փաստերը պարզ ապացոյց են մեր ասածի ճըշմարտութեանը: «Հին Բաւարիայում դեռ անցեալ դարու վերջին կառավարութեան բազմաթիւ փորձերը գործարանական արդիւնագործութիւն առաջացնելու մասին մաքսերով, պատուանշաններով (премія) մենավաճառութեամբ, ոչինչ կատարեալ առաջադիմութիւն չունեցան: Ֆինլանդիայում չը նայելով կառավարութեան մահուդի գործարաններին տուած բոլոր արտօնութիւններին, չը նայելով ծանր մաքսերին, մասնագիտական ուսումնարաններին, երկու տոկոսով տուած փոխատուութիւններին, մահուդի գործարանատէրերը, մի ժողովրդագրի խօսքերով, միայն «Թըշուառ արհեստաւորներ եւ որոնք կարող են աշխատել միայն պատրաստի բրդով» *) Իսկ մեծաքանակ արդիւնագործութիւնն առաւել ուժգին կերպով է տարածուած տնտեսական կազմից առաւել զարգացած երկիրներում եւ այս երկիրներից առաջին տեղն են բռնում Անգղիան, Բելգիան եւ Ֆրանսիան: Այժմ առաջ է գալիս մի հարց, թէ արդիւնագործութեան ո՞ր ձեւը առաւել յարմար է Անդրկովկասում եւ Հայաստանում: Սորան կեանքը ինքն է պատասխանում. դժուար է գտնել Անդրկովկասում մի տեղ, ուր տարածուած չը լինէր որ եւ է տնային արդիւնագործութիւն: Մի տեղ պատրաստում են շալ, միւս տեղ քաթան, երրորդ տեղում կաշի ամաններ եւ այլն եւ այլն: Դեռ մինչեւ այժմ էլ Անդրկովկասի մեծ մասը իւր տընային կարիքները լրացնում է տնային արդիւնագործու-

---

*) Корсакъ «Формы промышленности» стр. 1-ая.

*) Корсакъ. «Формы». промыш. стр. 45-ая.

թեան արդիւնքներով։ Ուրեմն զանազան տեսակ արդիւնագործութեան ձեւերից կարող է մեզ առ այժմ հետաքրքրել միայն տնային արդիւնագործութիւնը։ Իսկ բոլոր տնային արդիւնագործութիւններից աւելի նշանակութիւն ունի «գիւղական տնային արդիւնագործութիւնը»։ Այս պատճառաւ տեսնենք թէ արդիւնագործութեան այս ձեւը ինչ նշանակութիւն ունի գիւղական կանքում եւ առհասարակ ժողովրդական կեանքում։—

Նախ քան գիւղական տնային արդիւնագործութեան մասին խօսելը, որոշենք թէ ինչպէս հասկանանք այդ արդիւհանութիւնը։ Զանազան տեսակ են որոշում այդ արդիւհանութեան ձեւը, բայց այդ որոշումները կարելի է երեք տեսակ բաժանել։ Առաջին տեսակը որոշումն է Կորսակը. նա զանազանում «տնային արդիւնագործութիւնը», «արդիւնագործութեան տնային ձեւից» (домашняя промышленность и домашняя система производства) Առաջին տեսակից նա համարում այն արդիւնագործութեան ձեւը, որ գիւղացու կողմնակի պարապմունքն է, չէ պահանջում բաղադրեալ եւ թանկագին գործիքներ եւ թոյլ է տալիս ընդհատումներ արդիւնահանութեան ժամանակ։ Իսկ արդիւնահանութեան տնային ձեւը ասելով հասկանում է փոքրաքանակ տնային արդիւահանութիւն, որ կատարվում առաւել բաղադրեալ գործիքներով, որի առաջնորդ լինում դրամատէր, որ բաժանում հում նիւթ եւ այս արդիւնագործութիւնը կարող է լինել արհեստաւորի գլխաւոր պարապմունքը։ Ահա այս փոքրաքանակ արդիւնագործութեան ձեւը Կորսակը անուանում «Кустарный промыселъ» գիւղական տընային արդիւնագործութիւն։ *) Այս տեսակ որոշումը ճիշտ չէ. որովհետեւ գիւղական այնպիսի արդիւնագործութիւններ կան, որոնց կարելի է թէ մէկին թէ միւսին վերաբերել։ Կան պարապմունքներ, որոնք շատ հասարակ գործիքներով են կատարվում, այնպէս որ Կորսակի որոշման համեմատ պէտք է վերաբերել «տնային արդիւնա-

*) Корсакъ. «Формы промышл.» 16 стр.

հանութեան», այն ինչ որի առաջնորդը որ եւ է հում նիւթ բաժանող դրամատէր է: Այս յատկութեան համեմատ պէտք է վերաբերել «ա ր դ ի ւ ն ա գ ո ր ծ ո ւ թ ե ա ն տ ն ա յ ի ն ձ և ւ ի ն»: Այսպէս ուրեմն միեւնոյն արդիւնագործութիւնը կարելի է վերաբերել թէ մէկին եւ թէ միւսին, որն որ ապացոյց է Կօրսակի սխալ դասակարգութեան: Բացի դրանից կան արդիւնագործութիւններ, որ կատարվում են առաւել բաղադրեալ եւ թանկագին գործիքներով, այնպէս որ պէտքէր վերաբերել «ա ր դ ի ւ ն ա գ ո ր ծ ո ւ թ ե ա ն տ ը- ն ա յ ի ն ձ և ւ ի ն» սակայն առաջնորդող անձն չը կայ, եւ ամեն մի արդիւնագործ հանդիսանում է բոլորովին ազատ տէր իր արդիւնագործութեան, ուրեմն պէտք է վերաբերել «տ ն ա յ ի ն ա ր դ ի ւ ն ա գ ո ր ծ ո ւ թ ե ա ն»:

Երկրորդ որոշումը «գիւղական տնային արդիւնագործութեան» տալիս Աշխարհագրական ընկերութեան ժողովածու կազմողները, ըստ որոց համակցվում է գիւղացւոց բոլոր այն պարապմունքներն, որոնք երկրագործական չեն: Եւ այս որոշումը չի կարելի շատ ճիշտ համարել: Այս որոշումը միացնում է գիւղական դարբնի եւ ոստայնանկի արդիւնագործութիւնը: Բայց նրանք միատեսակ պայմաններում չեն: Ոստայնանկը աշխատում է իրան անյայտ բազարի համար, եւ ի հարկէ ենթարկվում է գների բոլոր տարուբերերին. այսօր ապրանքը լաւ է ծախվում, գնողների թիւը շատանում է—եւ արդիւնագործը յաջողակ է. էգուց առեւտուրը կտրվում է, գները ընկնում են եւ արդիւնագործը աղքատութիւն է քաշում: Իսկ գիւղական դարբնի համար գների տարուբեր չկայ. նա աշխատում է յայտնի գիւղի համար. նրան յայտնի է գիւղի պահանջը եւ մշտական—գիւղը միշտ կարիք ունի ինչպէս մեխերի, նոյնպէս եւ պայտերի եւ այլն: Ուրեմն գիւղական դարբնի արդիւնագործութիւնը ամբողջ տարի ապահոված է. նրա համար առեւտուրի ճգնաժամ չկայ: Այս պատճառաւ այդպիսի զանազան կերպ արդիւնագործութիւնները չի կարելի միացնել: Մօտաւորապէս այսպէս դատելով, Պ. Իսաեւը գալիս է այն եզրակացութեան, որ եղած որոշումները ճիշտ չեն եւ տալիս է իւր որոշումն: Նորա որոշումը այս է. «գիւղական տնային արդիւնագործութիւն պէտք է անուա-

նել հողատէր գիւղացւոյ այն արդիւնագործութիւններն, որոնք արդիւնաբերուած են անյայտ գործադրողների համար։*) Այս որոշումը բաժանում է քաղաքային արդիւնագործներին գիւղականներից եւ երկրորդ՝ գիւղական հասարակ արուեստաւորներին արդիւնագործներից։ Եւ եթէ մեզ հետաքրքրում է գիւղական արդիւնագործութիւնը՝ միայն այն չափով որքան նա երեւան է գալիս հողատէր գիւղացւոյ առօրեայ կեանքում եւ կրկին այնքան, որքան այս արդիւնագործութիւնը ընդգրկում գործում է գիւղացուն իւր ըննիկ անից խլող ամէն եւ թոյլ չի տալիս ձգել երկրի վրայ, իւր որդիքը, իւր օջախը՝ որտեղ նրա հայրերն ու պապերն են ապրել, ու դառնալ բաղոլին խաղալիք։ Սորանով է բացատրվում Ռուսաց կառավարութեան եւ զեմստվոների ձգտումն՝ ուսումնասիրել այս արդիւնագործութիւնը, առաւել զարգացնել եւ պաշտպանել քանի որ սա արդիւնագործութեան ուրիշ ձեւերից աւելի համապատասխան է կեանքին։

Որոշելով թէ ինչ պէտք է հասկանանք ասելով «գիւղական տնային արդիւնագործութիւն» (Кустарный промыселъ), տեսնենք նրա նշանակութիւնը գիւղական եւ առհասարակ ժողովրդական կեանքի մէջ։ Սորա համար օգտվում ենք այն ծրագրով որ առաջարկում են զեմստվոները այս արդիւնագործութեան ուսումնասիրելու համար։ Այդ ծրագրի համեմատ քննենք այդ արդիւնագործութեան պատմութիւնը եւ նրա երեւալու պատճառը, նրա տնտեսական եւ քաղաքական նշանակութիւնը, այն կապը որ կայ գիւղատնտեսութեան եւ այդ արդիւնահանութեան մէջ; վերջապէս այդ արդիւնագործութեան մտաւոր, եւ բարոյական ազդեցութիւնը գիւղացոց դասի վրայ։ Ի հարկէ ստիպուած ենք խօսել Ռուսաստանում հաւաքած նիւթերի օրինակների հիման վրայ, որովհետեւ Կովկասի մասին ոչինչ ճիշտ տեղեկութիւններ չ'ունինք։—Բայց սորանով գործի էութիւնը չի փոխուի. նոյնտեսակ պատճառները, միեւնոյն տեսակ պայմանների ազդեցութեան ներքոյ առա-

*) Исаевъ. «О куст. промышленности въ Россіи.» Русская мысль 188? г оп. XI стр. 90.

ջացնում են նոյն հետեւանքները։ Ուրեմն թէ երեւալու պատճառները, թէ նորա պատմութիւնը եւ թէ այդ արդիւնագործութեան նշանակութիւնը կը մնան նոյնը թէպէտ՝ մանրամասնութեանց մէջ կարող են զանազանութիւն ունենալ;— քանի առ այժմ խօսքը մանրամասնութեանց մասին չէ։

Գիւղական տնային արդիւնագործութիւնը պէտք է առաջ գար երբ կարիք զգացուեց զանազան արդիւնագործուած արդիւնքների։ Առաջին տեղը այստեղ բռնում են շորեղէններն ու կաշուեղէնները։ Մարդ կերակուրից յետոյ ամենից առաջ դոցա կարիքն զգայ։ Բուրդը տանից էր եւ ընտանիքը դրանից գործում էր շալեղէն, կաուհատը նոյնպէս տանից էր—գործում էին քաթանեղէն եւ այլն։ Իւրաքանչիւրը այս արհեստաւորներից մասակարարում էր շրջակայքին իւր արդիւնքները. մինը ունի շալեղէն, միւսը քաթանեղէն, երրորդը կաշուեղէն եւ այլն-նոքա միմեանց հետ փոխում են։ Այս կերպ գործը տեւում է երկար ժամանակ։ Վերջապէս ժողովրդի բազմանալու հետ առանձնանում են քաղաքային ընակիչները, երկիրը էլ առաջուան հունձերը չէ տալիս, այնպէս որ ընտանիքի բոլոր կարիքներին բաւականութիւն չէ տալիս։ Պէտք կամ աւելացնել վարուցանքը կամ աւելի կատարելագործուած գիւղատնտեսութիւն վարել։ Առաջինը անկարելի է լինում աղատ հողերի չը լինելու պատճառաւ, երկրորդը նոյնպէս դժուար է, որովհետեւ գիւղացին հեշտութեամբ չէ փոխում իւր վարուցանքի կերպը։ Մնում է միայն որոնել կողմնակի աշխատանքներ, իսկ եթէ կայ որ եւ է արդիւնագործութիւն՝ ընդլայնել նրա շրջանը։ Առաջինին դժուարութեամբ է դիմում գիւղացին. նրան դիւր է թողնել իւր ընտանիքը, իւր օջախը. եւ ցանկալի էլ չէ։ Մնում է գտնել նոյն տեղում աշխատանք։ Մինչեւ անգամ առաւել արդիւնաւէտ աշխատութիւններ չեն գրաւում նրան դէպի քաղաք։ «Ֆրանսիայում Կոլբերը ստիպուած էր ստիպողական միջոցների դիմել որպէս զի նրա հիմնուած գործարանները առանց մշակների չը մնային։» *) Ուրեմն առաջին բանը

*) Корсакъ. Форм. 80. стр..—

որին դիմում է գիւղացին — այն է փնտրել մի աշխատանք իւր տան մօտիկ. այսպէս առաջանում է գիւղերում արդիւնագործութեան պարապմունք. գործունէութեան նիւթն էլ գտնւում է մօտաւոր շրջանում. ուր անտառ կայ, այնտեղ փայտեղէն արդիւնագործութիւններն են զարգանում, ուր կաւ՝ կաւեղէնի եւ այլն։ Այս ժամանակ գիւղական արդիւնագործութիւնը շատ թէ քիչ անկախ է լինում։ Քանի որ բազարը այնքան հեռու չէ արդիւնագործողից, նա աշխատում է որ եւ է յայտնի շրջանի համար. ինքն է տանում իւր արդիւնքները մօտաւոր բազարները եւ տօնավաճառները։ Բայց այդ տեսակ գործը շատ քիչ ժամանակ է մնում. Օրէցօր այդպիսի արդիւնագործների թիւը բազմանում է. ուրեմն առաջուան բազարները բաւական չեն բոլոր արդիւնքների վաճառելուն. ստիպուած են որոնել նոր վաճառանոցներ. տանել իւրեանց ապրանքը քաղաք ծախելու։ Այդ տեղ առաջանում է մեծ դժուարութիւն գնողներ ճարելում։ Քաղաքի բոլոր գործարարները սովորել են յայտնի կրպակներից գնել. եւ վերջապէս նրանց ճաշակը շատ փոփոխական եւ պահանջող է։ կարողչէ միթէ հասարակ գիւղացին մրցել արդիւնագործութեան մէջ քաղաքի արհեստաւորների հետ ճաշակի եւ պահանջողութեան բաւականութիւն տալում։ Այնուամենայնիւ նա մրցում է նոցա հետ, արդիւնքի արժանութեան շնորհիւ։ Քաղաքի արդիւնագործը պէտք է այնքան աշխատէ, որ կերակրէ իւր ընտանիքը։ իսկ գիւղացին բաւականանում է աւելի քիչով. որովհետեւ կեանքի միջոցների մի մասը տալիս է նրան հողը։ Մինչդեռ քաղաքի արդիւնագործը պէտք է աշխատէ մէկ ռուբլի եւ առաւել, գիւղացին 30-40 կոպէկով էլ է բաւականանում։ Այսպիսով գիւղացու արդիւնքը երեւալով քաղաքի վաճառանոցներում, նոյն արդիւնքների արժանանալու պատճառն է դառնում, եւ սրանով ստիպում քաղաքի արդիւնագործներին դադարել գիւղերը, որտեղ առաւել աժան է ապրուստը *)։

---

*) Նկատ. Ինչպէս մեզ յայտնի է մանաւոր աղբիւրներից։ Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի եւ Ախալցխայի գաւառներում նը-կատւում է այժմ այդ երեւոյթը։

Քաղաքային արդիւնագործների ծաղկելը ազնուացնում է գիւղերի արդիւնագործութիւնը ազդելով նոյն վրայ իրանց առաւել կատարելագործուած արդիւնաչափութեամբ։ Գիւղացին, առաւել թանգագին ապրանք պատրաստելու ցանկութեամբ, աշխատում է նմանելով քաղաքային արդիւնագործին, սեփականելով նրա ձեւերը, կատարելագործել իր ապրանքը։ Օրէցօր արդիւնագործութեան բնական հում նիւթերը քչանում են, իսկ վաճառանոցը աւելի եւ աւելի հեռանում է։ Այստեղ հանդէս են գալիս վաճառականներ, որոնք գնում են արդիւնքը գիւղացուց եւ տալիս են նրան հում նիւթն նմանապէս եւ պատրաստելի արդիւնքների առաւել լաւ օրինակներ։ Այդպիսով գիւղացին օրէց՚օր աւելի սերտ կապվում է քաղաքի վաճառականների հետ։ Այդ ժամանակ քաղաքի փոքրաքանակ արդիւնագործութիւնը հազիւ հազ իր գոյութիւնն է պահպանում։ Արդիւնագործութեան օգտաւէտ լինելը պատճառ է դառնում նրա շրջանի լայնանալուն, (շահաւէտութիւնը պարապողների թիւը շատացնում է) որից կրկին անյարմարութիւն է առաջ գալիս ապրանքը վաճառելում։ Քաղաքից 50-60 վերստ հեռու աշխատող գիւղացուն շատ դժուար է տանել քաղաք իր արդիւնքը. եւ ով գիտէ կը ծախէ նրան։ Այդտեղ էլ հանդէս են գալիս չարչիներ, որոնք գնում են նրանց ապրանքը եւ ելթէ հարկաւոր է տալիս են հում նիւթ։ Այս չարչիներից գնում են մանր վաճառականներ, նրանցից առաւել մեծ վաճառականներ եւ այլն. այսպիսով հասնում է ապրանքը գործադրողի ձեռքը։ Ի հարկէ բոլոր այս վաճառականները մարդասիրութեամբ չեն դրդուած, այլ գլխաւորապէս իւրեանց շահերով։ Այնպէս որ միայն արդիւնագործող եւ գործադրող կողմերն են վնասվում։ առաջինը շատ աժան ծախելով եւ երկրորդը շատ թանգ գնելով, եւ շահվում են միայն չարչիններն ու վաճառականները։—

Առաջին շրջանում երբ արդիւնագործութիւնը շահաւէտ է՝ նկատվում է *արտակենտրօնացումն*. ամեն մի համբակ սկսում է անկախ աշխատել։ Իսկ երբ հում նիւթը պէտք է տանել դրսից եւ մեծ գումարի որպէս դի

աժան նստի՝ նկատւում է հակառակ երեւոյթը — կենտրոնացումն արդիւնագործութեան։ Այս դէպքում առանձին վերպետները միանում են, համարուեստ ընկերութիւններ են կազմում. հիմնում են ընկերական գործանոցներ, պահեստներ եւ այլն. մի խօսքով գործ են դնում ամեն միջոց որպէս զի ազատուեն վաճառականներից, որոնք գնում են արդիւնքը եւ տալիս հում նիւթ։ —

Բայց սոյա մրցումը սորանով չէ վերջանում. Նոքա ստիպուած են շարունակ մրցել եւ գործարանների հետ։ Գործարանների հետ մրցել այնպէս հեշտ չէ ինչպէս քաղաքի արդիւնագործների հետ։ Թէ եւ նրանց յաղթեցին, մասամբ հասարակ աշխատաւոր դարձնելով եւ մասամբ ստիպելով գիւղեր գաղթել արդիւնքի աժանութեան շնորհիւ. այստեղ արդէն իրանք են ստիպուած յետ քաշուել։ Գործարանները աւելի աժան արդիւնքներ են արտադրում։ Յառաջադիմութեանը սահման չունէ. ամեն մի նոր կեանքի մէջ գործադրուող նոր գիւտը բնական գիտութիւնների մէջ՝ աժանացնում է արդիւնքը։ Այստեղ սկսվում է մրցումը «կապիտալի»որին պատրաստ է ծառայել գիտութիւնը — եւ հասարակ գիւղացու մէջ բոլորովին անօգնական միայն յամառ ցանկութեամբ պահպանելու իրան ինքնուրոյնութիւնը։ Բոլորը, ինչով կարող է մրցել գիւղացի արդիւնագործը գործարանի հետ — դա աշխատութեան ժամերի շատացնելն է եւ աշխատութեան գինը պակասեցնելը։ Բայց թէ առաջինը եւ թէ երկրորդը իւրեանց սահմանն ունեն. վաղ թէ ուշ գիւղացին ստիպուածէր ցաւօք սրտի թողնել իւր տունը ու տեղը քանդել իւր օջախը եւ դառնալ քաղաքային մշակ։ Պէտք է նկատել որ եղել են օրինակներ երբ գիւղացի արդիւնագործի արդիւնքը աւելի յաջողութիւն է ունեցել քան գործարանինը։ Օրինակ. դեռ մինչեւ այժմս էլ Զվիցերիան քաջութեամբ մրցում է արդիւնագործութեան քանի մասերում Անգլիայի հետ։ Կան փաստեր եւ Ռուսաց կեանքից՝ որ նոյնն են հաստատում։*) Բայց բոլոր այս երեւոյթները պէտք է հա-

*) Այսպիսի մի օրինակ առաջ է բերում պ. Դ Մորդովցեվ։ «Այստեղ սկսվումէ մրցումը գիւղացոց գործարանի և Մոսկվայի հին

մարենք երբեւ բացառութիւն. վաղ թէ ուշ գիւղական տնային արդիւնագործութիւնը կը ոչնչանայ ամենեւին եւ նրա տեղ կը բռնէ գործարանը։ Բայց պէտք է ասել որ բաւականին շատ երկիրների համար այդ օրը հեռու է եւ առաւել արդիւնագործութեան մի քանի մասերի համար. ուրեմն այս դէպքում մնում է աշխատել, որ գիւղական տնային արդիւնագործութիւնը զարգանայ, որքան կարելի է։ Միեւնոյն բանի առիթով խօսելով պ. Իսաեւը գալիս է այն եզրակացութեան, որ կառավարութիւնը պէտք է օգնէ գիւղացուն այդ գործում։—«Եթէ մեծ վաճառականական ձեռնարկութեանց համար կառավարութիւնը տալիս է զանազան առաւելութիւններ եւ դորանով օգնում է հարստանալ տնտեսական կողմից զօրեղ անձանց, մի՞թէ նա (կառավարութիւնը) չի պահպանի անկումից թոյլ գիւղացի արդիւնագործներին, որոնք իւրեանց ուսերի վրայ են տանում հասարակական ամենադժուար տուրքերը «А. Исаевъ. Куст. Пром.» Рус. Мысль. 1883 г. XI Стр. 129

Այժմ ըստ մեծի մասին գիւղական արդիւնագործութիւնը այնպէս է կազմած, որ արդիւնագործն ստանում է ումից որ լինի հում նիւթ եւ վերադարձնում պատրաստ ապրանք, ստանալով 'ի հարկէ աշխատանք։ Բայց 'ի հարկէ կան եւ բոլորովին անկախ արդիւնագործութիւններ։

Փոքր ինչ առաջ մենք ասեցինք որ գիւղացի արդիւնագործները, որպէս զի չ՚ ընկնին վաճառականների ձեռքը, կարողանան նրան ընդդիմանալ, ստանալ հումնիւթ անմիջապէս-կազմում են համարուեստ ընկերութիւններ։ Միեւնոյն բանին ստիպում են եւ շատ անգամ առաւել քան թէ

---

գործարանի մէջ. Մասկվայի գործարանը մէկ գիւյմ հաստութեան փայտից խզարում էր 8 բարակ շերտ տախտակ (фанеръ); գիւղականը որպէս զի դէպի ինքը գրաւէ առաւել շատ յանձնողներ սկսեց խզարել 9 տախտակ, Մոսկվայինը մինչեւ 10 հասցրեց, գիւղականը կտրեց, 11 Մոսկվայինը՝—12, գիւղականը այնպէս սարքեց խզարներ որ 13 էր կտրում. այդպիսով յաղթեց Մասկվայի գործարանին, որը նոյն թւին չը կարողացաւ հասանել». Дѣло. № 41877 г. Стр. 1541

*վերպյիշեալ պատճառը՝ գործարանը։ Գիւղացի արդիւնագործը շատ լաւ է հասկանում, որ առանձին աշխատելով նա չէ կարող գործարանի հետ մրցել, որ նա շատ թոյլ է. բայց նա նմանապէս լաւ է հասկանում եւ այն, որ մենակ իրանք ոչինչ չեն կարող անել, թէ հարկաւոր է մի առաջնորդ, որ միացնէր նրանց, կազմէր նրանցից ընկերութիւններ։ Այստեղ Ռուսաստանում օգնում է արդիւնագործներին կառավարութիւնը. եւ ահա այժմ ունենք կանոնադրութիւն այդ տեսակ ընկերութեան, որ հաստատել է առաջուայ ել եւ մտից նախարարը (ֆինանսի մինիստրը) Գ. Րէյտէրն, դեկտեմբերի* **22** *ին* **1872** *ամի։ Այդ կանոնադրութիւնը, ինչպէս այս բոլորից կ՚երեւայ աչքի առաջ ունի խանգարել գիւղացի արդիւնագործին պրօլէտարիատ դառնալ եւ տալ միջոց այդ արդիւնագործներին վայելել բոլոր այն առաւելութիւնները, որ ունի մեծաքանակ արդիւնագործութիւնը։ Ահա այդ կանոնադրութեան առաջին յօդուածի միտքը.*

*ա. Գնել հում նիւթ եւ արդիւնագործութեան գործիքները։*

*բ. Հիմնել ապրանքների պահեստներ։*

*գ. Ընկերութեան անունով ընդունել զանազան յանձնարարութիւններ կապալներ եւ կատարել այդ գործը, բաժանելով ընկերութեան անդամներին մէջ։*

*դ. Միասին աշխատել մեքենաներով առանձին կազմած գործարաններում։* *)

*Զեմստւոները նմանապէս ուսումնասիրում են այդ արդիւնագործութիւնը եւ ՚ի հարկէ ոչ միայն ուսումնասիրելու համար, այլ որ իւր ժամանակին օգնեն եւ գիտենան ինչպէս օգնեն գիւղացի արդիւնագործներին։ Պավլովսկի ընկերութեան փորձը (որոյ կանոնադրութեան մասին խօսեցի փոքր ինչ առաջ) մեզ ցոյց է տալիս որ այդ ընկերութիւնները կարող են առաջադիմութիւն ունենալ եւ տարածուել։—*

*Ստուարապէս նկարագրածիս նման է գիւղական արդիւնագործութեան պատմութիւնը, նրա երեւալը, պատ-*

---

*) Н. Григорьевъ. Матеріалы къ изученію куст. Промышленности. „Волга.“

ճառը եւ նորա դրութիւնը Ռուսաստանում։ Ուրեմն արդիւնագործութեան տարածման պատճառը պէտք է որոնել — միայն երկրագործութեան պարապմունքի անբաւարարութեան մէջ եւ կողմնակի պարապմունքներով արդիւնքի պակասորդը լրացնելու ձգտման մէջ։ Բացի այս պարապմունքներից որ երեւան են գալիս որպէս լրացուցիչ միջոց երկրագործի արդիւնքի, կան եւ այնպիսի պարապմունքներ, որոնք երեւան են գալիս որպէս երկրագործութեան ուղղակի հետեւանք — մեր խօսքը երկրագործական արուեստական պարապմանց մասին է։ Մի քանի գետնի յատկութիւններ նպաստում են յայտնի բոյսերի զարգացման։ Բայց դոցա արտահանել դժուարանում է մեծածաւալութեան շնորհիւ. այնպէս որ մնում է դրանց արդիւնագործել եւ այնպէս արտահանել. եւ այս հանգամանքը առաջացնում է արդիւնագործութիւն, որ սերտ կապուած է երկրագործութեան հետ։ Փաստեր, որոնք հաւաքուած են արդիւնագործութեանց տարածուած տեղերում հաստատում են մեր ասածը։ Այսպէս — կարթոֆիլից մաթ շինելու պարապմունքը տարածուած է այնտեղ, ուր տարածուած է կարտոֆիլի ցանքը, իսկ սա աւազոտ հողի վրայ է լաւ բուսնում։ Ուրեմն աւազոտ հողը առաջացնում է նոր արդիւնագործութիւնը։ Ուր կտաւատը լաւ է բուսնում, վաղուց տարածուած է կտաւեղէնք գործելը եւ այլն։ «Այսպէս ուրեմն ասում է Վէրնէրը, թէ Կլինի եւ թէ Բրոնիցի գաւառներում օսլա եւ մաթ շինելու պարապմունքները պատահում են միայն աւազախառն հող եղած տեղերը։ Եթէ մտաբերենք որ այդ հողի վրայ ամենից լաւ է բուսնում կարտոֆիլը, որ աւազախառն հողը ներկայացնում է հում նիւթ ձեռք բերելու նպաստող հանգամանք (այժմս կարտոֆիլի) այն ժամանակ բոլորովին պարզ կը լինի, որ այն մեր նկատած կապը հողի յատկութեան եւ պարապման մէջ պատահական չէ։ Հում նիւթ ձեռք բերելու յարմարութիւնը եղել է պատճառներից մէկը այդ արդիւնագործութեան երեւան գալու։» *)

---

*) Сборникъ статичестихъ свѣденій по московской губерніи т. II выс. I стр 8.

Ամփոփելով բոլոր ասածներս գալիս ենք այն եզրակացութեան՝ որ երկու պատճառներից են առաջ գալիս գիւղական արդիւնագործութիւնները. 1) երկրագործութեան անբաւարարութիւնը, ուր արդիւնագործութիւնը առաջ է գալիս ինչպէս լրացուցիչ միջոց գիւղացու տնտեսական ծախքերի եւ 2) յայտնի հողային եւ կլիմայական պայմաններ՝ ուր արդիւնագործութիւնը առաջ է գալիս որպէս երկրագործութեան անմիջական հետեւանք։—Պատմութեան մէջ զանազանում ենք արդիւնագործութեան երեւալը, արտակենտրոնացումն որպէս արդիւնագործութեան օգտաւէտութեան հետեւանք, կենդրոնացումն, որպէս զանազան անյաջող հանգամանքների դէմ մրցելու միջոց. եւ վերջապէս արդիւնագործութեան անկումը կապիտալի անզուսպ ճնշման ներգործութիւնից։ Շատ հաւանական է որ արդիւնագործութեան պատմութիւնը զանազան տեղերում բոլորովին մեր պատմածի ճիշտ պատկերը չը լինի—բայց այնուամենայնիւ գլխաւոր կէտերը նոյնը կը լինին։—

(Կ'շարունակուի)

Հ. Տ. Բ.

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՍԻՄԷՈՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# „ՄՇԱԿ“

## ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

ԱՅՍ 1883 ԹՈՒԻՆ

(ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

*Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով։*

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ։ II. Առաջնորդող յօդուածներ։ III. Ներքին տեսութիւն։ IV Արտաքին տեսութիւն։ V. Խառն լուրեր։ VI. Հեռագիրներ։ VII. Գեղիեռան կամ Բանասիրական։ VIII. Ցայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ 10 *ռուբլի է։ կէս տարվան 6 ռ։ իւրաքանչիւր ամսին 1 ռուբլի։ Հատով համարները 5 կոպ։*

*Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով* Тифлисъ, Редакція „Мшакъ.“

*Խմբագիր, հրատարակող* ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ.

---

# ՄԵԳՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

## 1883 թ.

*Կը հրատարակուի նոյն գիրքով և ուղղութեամբ։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ *Առաջնորդող յօդուածներ։ Ազգային։ Քաղաքական։ Հեռագիրներ։ Բանասիրական։ Մանր լուրեր։ խառն լուրեր։ Պատասխանիք Խմբագրութեան և Ցայտարարութիւններ։*

*Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։*


---


Дозволено Цензурою Тифлисъ, 30 Апрѣля 1883 г.
Тип. М. Вартапянца и К°.

# ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ։

Հաւաքածու բարոյական, քրիստոնէական, պատմական ուսումնական, աշխարհագրական և այլ պիտանի գիտելեաց, մանկական վէպերի, մանրավէպերի և զուարճալի խաղերի։

Հրատարակւում է Կ. Պոլսում տեսր առ տեսր տասն և հինգ օր մի անգամ 16 երեսից բաղկացած։

Տարեկան գինն է Ռուսաստանի համար ՉՈՐՍ ռուբլի։

Բաժանորդագրութիւնը Կովկասում ընդունվում է „Վարժարան՝՝ ամսագրի գրասենեակում (Թիֆլիս, Սադովայա փողոց, տուն Մարգարեանի)։

# „ԳՈՐՑ“

## Գրականական քաղաքական և Ազգային ամսագիր

## 1883 թ.

Հրատարակվում է նույն պրոգրամայով և ուղղութեամբ:

„ԳՈՐՑ“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) երես, եւ դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում.

### Ն ա խ ա գ ի ծ.

Ա.) Ժամանակագրութիւն. տէրութեան կարգադրութիւններ: Ռուսաց, արտասահմանի եւ Կովկասի նորութիւնները:

Բ.) Քննական յօդուածներ հայերի եւ նոցա դրացի ազգերի անտեսական բարոյական եւ մտաւորական դրութեան մասին:

Գ.) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն եւ թարգմանական:

Դ.) Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրուող գրքերի. նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու Կովկասեան կեանքիցն է առնուած:

Ե.) Քաղաքական տեսութիւն:

Զ.) Ներքին տեսութիւն:

Է.) Մանկավարժական ժամանակագրութիւն:

Ը.) Այլք եւ այլք:

Թ.) Իբրեւ յաւելուած—Եւրոպական եւ ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն:

Ցայտարարութիւններ:

---

Ա.) Տպագրութեան համար ընդունուած յօդուածները հարկաւոր համարուած դէպքում, կրճատվում են և ուղղվում:

Բ.) Տպագրուելիք անյարմար յօդուածները վերադարձնվում են հեղինակի պահանջելուց յետոյ:

Գ.) Մանր ոտանաւորներ և յօդուածները չեն վերադարձնվում:

Դ.) Բոլոր յօդուածները պէտք է գրուած լինին լայն տողերով և սրոշ, խառն գրուածները կը մնան առանց ուշադրութեան:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն ամեն տեղ 8 ռուբլի
Վեց ամսուանը . . . 5 ռուբլի
Երեք ամսուանը . . . 3 ռուբլի
Մի ամսուանը . . . 1 ռուբլի

### Վ ա ճ ա ր ը կ ա ն խ ի կ է.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Шуша. Редакція армянскаго журнала „ГОРЦЪ“.

Արտասահմանից· Choucha (Caucase) Bedaction du journal „Gortz“

Թիֆլիզում կարելի է ստորագրուել Պ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ մօտ: